

Ալիսը

Կապոյտ Յիշատակներ Յրդեհուած Մելգոնեանէն

«Մելգոնեանցի ըլլալը չի բացատրուիր, այլ՝ կ'ապրուի միայն»

Վարդգէս Գուրուեան

Մելգոնեանի դպրոցական օրը պաշտօնապէս կը սկսէր մանչերու շէնքին առջեւ շարուելով, Բարեգործականի եւ Մելգոնեանի քայլերգները երգելով, տնօրէնին խօսքը լսելով եւ ապա՝ շարքով դասարան մտնելով:

Երբ ժամը 7:30-ին զանգը հնչէր, մանչերը կը սկսէին շէնքին առջեւ շարուիլ: Աղջիկները, իրենց շէնքի միջնայարկին մէջ դասարան առ դասարան շարուելէն ետք, շարքով մանչերու շէնքին առջեւ կու գային եւ մեր քով իրենց տեղերը կը գրաւէին: Քանի որ դասարանիս բարձրահասակ տղոցմէն էի, մեր շարքին ամենաետեւները կը կենայի ես:

Ասիկա շատ լաւ դիրք էր աղջիկներուն զալը դիտելու: Առաջին տարիներուն, քանի որ դասարանները երկսեռ չէին, առաւօտեան այդ քանի մը վայրկեանները իրենց արժէքը ունէին: Միաժամանակ այս պահը առիթ էր ինքզինք ցոյց տալու:

8-րդ դասարանին ամենէն առջեւէն անուշիկ աղջիկ մը կը քայլէր: Այտերը՝ մուշ վարդագոյն, շրթները՝ կարմիր եւ հասուն, կարծես թէ հիմակուան հաշուով «պօթօքս» ըրած ըլլար: Խոշոր եւ գեղեցիկ աչքերէն անմեղ ժպիտը անպակաս էր: Երկար մազերը միշտ հիւսած կ'ըլլար: Երբեմն գլխուն զագաթէն դէպի ետեւ, երբեմն մէկ կողմէն միայն, երբեմն ալ երկու ականջներուն տակէն վար հոսելով:

Պէտք է ըսել որ մազերը հիւսուած ըլլալով հանդերձ մինչեւ մէջքը կը հասնէին: Ես, չեմ գիտեր ինչու՞, երկար մազերով աղջիկները շատ կը հաւնէի: Մազերը մասնաւոր գրաւչութիւն մը ունէին ինծի համար: Հաւանաբար Մարիամ Մակթաղենացիի երկար մազերէն ազդուած էի ...

9-րդ դասարանին, այդ անուշիկ աղջկան մազերը կարճցած էին: Հաւանաբար այդքան խնամք տալու ժամանակ չկար այլեւս:

Մելգոնեանի խոնարհագոյն կարգերուն մէջ, միայն արաբերէնի եւ յունարէնի դասապահերը երկսեռ կ'ըլլային: Արաբերէնի դասապահերուն, այս վարդագոյն այտերով, կարմիր՝ ապստամբած շրթներով եւ երկար մազերով աղջիկը չէր գար: Իմացայ որ կիպրացի է ... : Ոչ միայն կիպրացի՝ այլ նաեւ «ցերեկեայ»: Անոր համար ալ «Չուարթ Երեկոյ»ներուն կամ ընդհանրապէս գեղարուեստական ձեռնարկներուն այս աղջիկը չէի տեսներ: Իմացայ նաեւ որ այս աղջկան մայրը Մելգոնեանի առտնին տնտեսութեան ուսուցչուհին է:

Այս անուշիկ աղջիկը դասարանային դաշտագնացութիւններուն կը մասնակցէր, բայց Մացակ Թեօշկերեանը միշտ անոր հետ կ'ըլլար: Պասի մէջ թէ դաշտերուն, Մացակը հետն էր: Սիրահարներ չէին, բայց Մացակը կը սիրէր միշտ անոր հետ ըլլալ: Մացակը, ինչու՞ չեմ գիտեր, դաշտագնացութիւններուն միշտ ժաքթօ, ճերմակ շապիկ եւ փողկապ կը հագուէր: «Աղջիկները ասանկ կոկիկ տղաքը շատ կը սիրեն», կ'ըլլար իր բացատրութիւնը:

Երբ 11-րդ-դասարան եղանք, արդեն դասապահերը երկսեռ կ'ըլլային: Մացակը, ընտանեօք Անգլիա գացած էր եւ այս վարդագոյն աղջիկն ալ՝ ազատ էր:

Դասարանիս վեց տղոցմէ հինգը անձկութեամբ կը սպասէինք աղջիկներուն ժամանման: Տասներկու աղջիկները ճռուողելով դասարան կը մտնէին, անոնցմէ ոմանք գաղտագողի մեզի նայելով, ուրիշներ՝ քիչ մը անտարբեր, իսկ ոմանք ալ, չեմ գիտեր ինչու՞, մեզ չէին նշմարեր:

Քանի մը շաբաթ անց, նշմարեցի որ այդ վարդագոյն այտերով աղջիկը շատ համեստ է, քիչ մը ամօլկոտ եւ շատ քաղաքավար:

Կամաց կամաց, չեմ գիտեր ինչպէ՞ս, ասանկ մօտիկութիւն մը սկսայ զգալ իրեն հանդէպ: Զակառակ որ դասարանիս աղջիկներէն ոմանք փորձեր կը կատարէին իմ ուշադրութիւնս գրաւելու, ես սկսած էի կեդրոնանալ այդ աղջկան վրայ:

Երբ համակրանքս ակելի խորացաւ, սկսայ ակելի մտերմութիւն ցոյց տալ իրեն հանդէպ: Նախ կարգադրեցի որ դասարանին մէջ իմ քովի գրասեղանին վրայ նստի: Քանի մը անգամ, ուրիշ աղջիկներ մասնաւոր այդ գրասեղանին վրայ նստան որպէսզի ի՛մ մօտս ըլլային եւ ուշադրութիւնս գրաւէին: Քաղաքավար՝ բայց քիչ մը խիստ, հասկցուցի որ այդ գրասեղանը «գրաւուած է»:

Դասապահերուն, բնականաբար, ուշադրութիւնս կեդրոնացած կ'ըլլար իր վրայ: Դասերը կարելուր ըլլալով հանդերձ, այս աղջկան հետ անուշ-անուշ խօսիլը ակելի կարելուր էր: Դասերը, երբ որ ըլլար, կարելի էր սորվիլ, իսկ այս աղջկան հետ՝ չէի կրնար միշտ խօսիլ: Դասերէն ետք աղջիկները իրենց շէնքը պիտի երթային, եւ մենք, մանչերս պիտի մնայինք անոնց ժպիտներուն յիշատակովը: Եւ քանի որ սրտիս մէջ որոշ տեղաշարժեր տեղի կ'ունենային, ուրեմն ուշադրութիւն պէտք էր դարձնէի որ սիրտս չվիրաւորուի, բայց մանաւանդ իր սիրտը՝ չցաւի:

Դասապահերուն այս գաղտագողի խօսակցութիւնները հետզհետէ ակելի եւ ակելի հաճելի սկսան դառնալ: Կը զգայի որ ինքն ալ անտարբեր չէր: Երբեմն, երբ զբօսանքի համար աղջիկները պէտք էր իրենց կողմը անցնէին, այս աղջիկը կը յամենար: Օրուայ վերջը, դասարանէն ամենավերջին դուրս ելլողը ինք կ'ըլլար: Տաքուկ զգացում մը կ'ունենայի երբ հետը խօսէի: Չէի ուզեր որ զբօսանքներուն երթար: Երբեմն դասարան կը մնար, եւ քանի որ տղոց հերթապահը դասարանները չէր քններ (աղջկանց հերթապահներուն պէս), ուրեմն վախ չկար որ «բռնուէինք»: Արդէն ի՞նչ ըրած ունէինք որ, բացի քով քովի նստած, իրարու աչքերուն մէջ նայելով, անուշ անուշ խօսելէն:

Զմռան, անձրեւոտ օրերուն, առաւօտեան քայլերգները մանչերու շէնքին մէջ, բարերարներու կիսանդրիներուն առջեւ կ'երգէինք: Մանչերը առջեւի մասին մէջ կը շարուէին, դէմքերնին դէպի ճեմիշները ... իսկ աղջիկները որ գային՝ մեր ետեւը: Եւ քանի որ ես մեր դասարանի շարքին ամենաետեւը կը կենայի, ուրեմն ճիշդ իմ ետեւս աղջիկները կը շարուէին: Այդ անուշիկ աղջիկը միշտ դասարանի շարքին ամենաառջեւը կ'ըլլար: Զիմա մազերը կարճ էին, բայց ամէն օր շատ կոկիկ սանտրուած դպրոց կու գար: Շատ ուշադիր էր որ համազգեստը միշտ մաքուր եւ արդուկուած ըլլար, կօշիկները՝ մաքուր: 1960-ական թուականներուն, կարճ մազերը կամ դէպի ներս դարձնելով կը սանտրէին, կամ շիտակ, կամ ալ դէպի դուրս եւ քիչ մը վեր դարձուած: «Այլ շաթ» կը կոչէին այս վերջին ձեւը: Այս աղջիկը սովորութիւն ունէր մազերը ներս դարձուած սանտրել:

Առտու մը, անուշիկ այս աղջիկը դարձեալ մազերը դեպի ներս սանտրած եկած էր դպրոց: Հասկնալու համար որ ի՞ր զգացումները որքանով տաք են ինծի հանդէպ, ըսի փորձ մը ընեմ եւ ինչորեմ որ մազերը յաջորդ օրը դեպի դուրս, «ալա շաթ» սանտրած գայ:

Իբր թէ պատահական, ըսի իրեն որ ինչու՞ մազերը դեպի դուրս չի սանտրեր: «Վաղը մազերդ ալա շաթ սանտրած եկուր, նայինք կը վայելե՞ քեզի», ըսի:

Եթէ մազերը ալա շաթ սանտրած գար, ուրեմն «ինկած էր», իսկ եթէ այլապէս՝ տակաւին շատ ճամբայ ունէի դեպի իր սրտին սահմանները:

Յաջորդ առտու երբ քայլերգներէն ետք ետեւ դարձայ, Աստուած իմ ... լայն ժպիտով, վարդի պէս կարմրած այտերով դիմաւորեց զիս եւ մազերը՝ ալա շաթ սանտրուած:

Եղաւ: Ուրեմն ինքն ալ անտարբեր չէր ինծի հանդէպ:

Հիմա պետք էր սկսէի սրտին պարիսպները քար առ քար վար առնել եւ «բերդը գրաւել»:

Մտերմութիւնս ամէն օր քիչ մը աւելի կը ջերմանար: Երբեմն Մելգոնեանի պուրակէն ծաղիկներ կը քաղէի եւ իր գրասեղանին դարակներուն մէջ կը գետեղէի ընդօրինակուած սիրային բանաստեղծութեան մը ընկերակցութեամբ: Երբեմն երբեմն այդ բանաստեղծութիւններուն մասին հարցումներ ալ կը հարցնէի. «սիրեցի՞ր», «համաձա՞յն ես բանաստեղծին միտքերուն եւ զգացումներուն հետ», «պիտի ուզէի՞ր որ տղայ մըն ալ քեզի այդպէս բանաստեղծութիւններ գրեր», եւայլն:

Ստացած պատասխաններս միշտ ժպիտով՝ դրական կ'ըլլային:

Եւ այսպէս, շաբաթներու եւ օրերու թաւալքին հետ համակրանքս կ'աճեր: Վերջապէս ու՞ր կրնայի ասանկ ամբողջական գեղեցկութեամբ աղջկայ մը հանդիպիլ, որուն համակրելէս ետք, ինքն ալ պիտի սկսեր նոյն զգացումները սնուցանել հոգիին խորունկ մեհեաններուն մէջ: Հակառակ որ իր միայն ֆիզիքական գեղեցկութիւնը բաւարար պէտք էր ըլլար որեւէ պատանիի սիրտը գրաւելու, այս աղջկան համեստութիւնը, քաղաքավարութիւնը, ամօթխածութիւնը, նկարագրի մաքրութիւնն ու մտային կարողութիւնները զինք անգտանելի էակի մը վերածած էին: Կիպրացի դասընկերես լսած էի նաեւ որ իր ընտանիքն ալ տարբեր «դասակարգ»ի կը պատկաներ: Մօրաքոյրներէն մին, Դեղձանիկը, Կիպրոսի Ընդհանուր Դատախազի անձնական քարտուղարուհին էր, միւսը՝ Շաքէ Վարսեանը, Հայաստան, գրագետ - մտաւորական, «Հայրենքի Ձայն» պարբերաթերթի խմբագիրներէն, իսկ միւս մօրաքոյրը՝ Սօսի Պետիկեանը, Պէրու, Դարուհի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանի տնօրէնուհին: Հայրը՝ ատանացի, մայրը՝ մուսա լեռցի, ի՞նչ մնաց պակաս: Ասանկ աղջիկ մը ձեռքէ փախցնելը պարզապէս յիմարութիւն պիտի ըլլար ... :

Այլեւ ոչ թէ օրերուն թաւալքին հետ, այլ ժամերը սկսած էի հաշուել: Մարմնիս ձախ կողմը միշտ տաքութիւն մը կար: Երբ անուսը լսէի, հաճելի դող մը կ'անցներ մէջես: Այլեւս անհամբեր էի առտուները զինք դիմաւորելու մաղթերգներու ժամանակ: Հա՛ւ, ցերեկօթիկ էր, ուրեմն առտուն դպրոցի փոքր, կանանչ պատով պիտի գար: Ամէն առտու սկսայ պասին ժամանման պահուն դուրսը, մանչերու շէնքին առջեւ, ցանկապատ-մացառներուն մօտ իրեն սպասել: Եւ ի՞նչ մեծ հաճոյք էր, երբ ան գար եւ ինծի նայելով լայն ժպտար եւ հեռուէն «բարի լոյս»ը ըսեր: Իր շրթներուն շարժումին մէջ ես կ'ուզէի տեսնել օղէն ճամբուած գաղտագողի համբոյրները ... :

Նոյնը կ'ընէի կէսօրէ ետք, երբ պասով ցերեկեայ աշակերտները տուն պիտի վերադառնային: Շէնքին առջեւ կը կենայի եւ աջ ձեռքս օդը կը նետէի եւ գլխուս մագերը շտկելու պէս՝ «պայ պայ»ս կ'ըսէի: Ինքն ալ լայն ժպիտով, պասի մեջէն ետեւ դարձած ինծի իր «պայ պայ»ը կ'ըսէր: Եւ հիմա, մինչեւ յաջորդ առտու, պէտք էր իր այդ օրուան վերջին ժպիտովը ապրէի, երազէի այն աղուոր օրուան, երբ պիտի կարենայի զինք գրկել ու ... :

Սկսայ իրեն յուշել որ գեղարուեստական երեկոներուն ալ գայ: Շրջան մը երգչախումբին անդամ ալ եղաւ: Սկսաւ «Չուարթ Երեկոյ»ներուն ալ գալ եւ, բնականաբար, միշտ քովս կը նստէր: Ինչ հաճելի էր երբ «քառակուսիներու խաղ» ին կամ «թակարդներու խաղ»ին ձեռք-ձեռքի բռնած կը վազէինք: Ինչ տաքուկ էր ձեռքը, ինչ փափուկ, կարծես արիւնս կը սկսէր դէպի իր սիրտը հոսիլ, իսկ իր կարմիր եւ մաքուր արիւնը՝ դէպի իմ սիրտս: Արդէն սկսած էի մտածել որ «մէկ հոգի եւ մէկ մարմին» եղած ենք:

Այս բոլորով հանդերձ, տակաւին իրարու չէինք խոստովանած մեր սերը:

Մելգոնեանի մէջ այն տարիներուն, տակաւին հոգեկան ապրումներն ու ոգեղէն սրբութիւնները արժէք ունէին: Սիրած աղջիկդ միայն ֆիզիքական գոյութիւն չէր, այլ ոգեղէն մարմնացումը՝ քու երազներուդ, հոգեկան եռութիւնը քու ներքին ամենախոր գագաթներուդ: Սիրած աղջիկդ քու հոգիիդ ամենախորունկ ծալքերուն մէջ, սրբազնագոյն գագաթին վրայ կառուցուած սիրոյ մեհեանիդ քմրուհին էր: Ան, վերջնական եւ ամբողջական պատկերացումս էր քու երազներուդ եւ իղծերուդ եւ զգացումներուդ, եւ նոյն ինքն՝ քու եռութիւնս էր, որուն համար աղօթած էիր եւ նաեւ մինչեւ յաւիտենականութիւն պիտի աղօթէիր եւ խնկարկէիր հայոց անմահ աստուածներուն, Անահիտին եւ Աստղիկին, որպէսզի ան ապահով մար, որպէսզի անոր սերը անթառամ մար, որպէսզի անոր աչքերէն ծորող գեղեցկութիւնը, ժպիտներն ու լոյսը քեզի պարգեւէին երջանկութիւնը անբիծ, անեացումը քու հոգիիդ, եւ յաւերժութիւնը քու տոհմիդ:

Եւ օր մըն ալ որոշեցի սիրտս բանալ իրեն, թողուլ որ ան ներս մտնէ եւ տեսնէ հոն հրդեհուած հորիզոններ սիրոյ տաճարներու: Պէտք էր այլեւս մեր զգացումները «պաշտօնականացնէինք», բացուէինք իրարու եւ Աստղիկ աստուածուհիին օգնութեամբ եւ օրհնութեամբ, մեր սերերը հանգուցէինք, միաձուլէինք եւ գէթ ամժամապէս, սիրտերով ամբողջովին միանայինք, «մէկ սիրտ» ըլլալու, ապագային թողնելով «մէկ մարմին» ըլլալու գերագոյն երջանկութիւնը ... :

24-25 էջնոց կարճ նամակ մը գրեցի իրեն:

Արդէն «սիրային նամակներ» գրելու արուեստին տիրացած էի ընկերներուս համար բազմաթիւ սիրային նամակներ գրելով: Այս մէկը սակայն տարբեր էր: Հոս պէտք էր ամէն բան, ամէն միտք, ամէն զգացում բացարձակապէս անկեղծ ըլլար եւ գեղեցիկ, ջերմ պէտք էր ըլլար եւ մաքուր, իւրաքանչիւր բառ պէտք էր միտք մը, զգացում մը, ապրում մը արտայայտէր: Սիրտս պէտք էր բացուէր եւ հոն տեղի ունեցած երկրաշարժներն ու հրաբուխները ժայթքէին, հոսող սիրոյ տաք լաւան սակայն պէտք չէր այրեր անտառները հոգիիս ու ծիւերը փթթող ծաղիկներուն:

Այս բոլորէն զատ, գրած նամակս պէտք էր ցոլացներ իրաւ սիրոյ բոլոր խաւերը, բոլոր երանգները: Ծիածանուած պէտք էր ըլլար նամակս, իմ սիրտես դէպի իր սիրտը երկարող: Ծիածանի գոյները որքան որ ընդելուզուած ըլլային, պէտք էր նաեւ իրենց ջինջ գոյները պահէին եւ ամէն գոյն իր զանազան եւ զարմանազան երանգներով արտացոլացներ այն սերն ու ապրումները որոնք իմ հոգիիս մեհեաններուն մէջ անյիշատակ ժամանակներէն ծնունդ էին առած:

Նամակս կատարելագործուած պէտք էր ըլլար:

Ըստ իս, մինչեւ հիմա գրուած սիրային բոլոր նամակներուն կատարելագոյնը պէտք էր ըլլար նամակս: Բանի որ ան արժանի էր միայն լաւագոյնին:

Անունիս պէս վարդ պէտք էր բուրեր նամակս: Բայց միայն վարդով չէ որ պիտի գեղեցկացնէի իր հոգին: Ուրեմն, աշխարհի բոլոր ծաղիկները պէտք էր հաւաքէի եւ անոնք ամփոփուած ձօնէի իրեն:

Հոգիս սակայն անպարփակ էր: Անջրպետային տարածութիւնները սեղմ կու գային գայն պարփակելու: Վահագնի Ծիր Կաթինը մէկ անկիւնը միայն կրնար գրաւել անոր լոյսով ողորդուած տիեզերքին մէջ: Միլիառաւոր աստղերու անվերջանալի լոյսն ու ջերմութիւնը հազիւ կրնային լուսաւորել հոգիիս խորերը թաքնուած զգացումներս: Բայց հիմա, հիմա որ ան հոն էր, անոր աչքերէն ճառագայթող լոյսը բաւարար էր հոգիս լուսաւորելու, ջերմացնելու, գեղեցկացնելու, զիս երջանկացնելու:

Սիրտս կը խայտար անոր ներկայութեամբ:

Սիրտս պէտք էր նամակիս մէջ ըլլար, իր ամբողջութեամբ: Իր ամբողջ անկեղծութեամբ: Իր ամբողջ ապրումներով: Իր բոլոր գոյներով: Իր տիեզերական անհունութեամբ: Իր բոլոր պլպլացող աստղերով: Իր Աստղիկ աստուածուհիով:

Ինչպէս որ սովորութիւն էր Մելգոնեանի մէջ, նամակս կոկիկ մը ծալլելէս ետք, գիրքի մը մէջ դրի եւ յանձնեցի իրեն:

«Մէջը նամակ մը գրած եմ, լաւ կարդա՛», ըսի իրեն:

Եւ նամակս գնաց իր տիրոջ հոգեկան աշխարհը բռնկեցնելու:

Բանի մը օր անցաւ, բայց պատասխան չկար: Այո, նորէն դասարանին մէջ միշտ միասին էինք, նոյն անկեղծութեամբ կը խօսէինք, բայց ... պատասխան չկար:

Կը զգայի որ տարբեր ամօթխածութիւն մը պատած էր զինք: Երբեմն չէր համարձակեր աչքերուն մէջ ուղիղ նայիլ: Երբեմն կը կմկմար: Երբեմն «հոն չէր», կարծես չէր լսեր ըսածներս:

Բանի մը օր ետք, համբերութիւնս հատաւ:

«Նամակիս պատասխանը ե՞րբ պիտի ստանամ», հարցուցի:

Կարմրեցաւ, գետին նայեցաւ եւ առանց բառ մը խօսելու փախաւ:

Լաւ, ըսի, քանի մը օր եւս սպասեմ:

Բայց չէ՞ որ արդէն ամիսներով, ակելի ճիշդ, դարերով միասին եղած էինք, իրարու ճիւղները վայելած, սրտատրոփ զիրար սպասած էինք քիչ մը ամէն տեղ: Ինչու՞ էր այս ուշացումը: Գիտէի որ «նազ» չէր ըրածը: Հաւանաբար ինքն ալ իր զգացումներու աշխարհին մէջ փնտռողներու մէջն էր: Արդեօք կ'ամչնա՞ր: Վստահ չէ՞ր իր զգացումներուն վրայ, եթէ ոչ կ'ուզէր քիչ մը սպասելով չարչարել զիս: Բայց ինքը այդ տեսակ աղջիկ չէր:

Օր մըն ալ, վերջին դասաժամն ալ երբ վերջացաւ եւ աղջիկները իրենց շէնքը պէտք էր երթային, բայց ըստ իր սովորութեան, ան տակաւին կը յամենար մնալ դասարան, քանի մը վայրկեան եւս վայելելու իմ ներկայութիւնը եւ ինծի շնորհելու այդ քանի մը յաւելեալ վայրկեաններու ջերմ

վայելքը: Ինքզինքիս ինչպես այդ համարձակությունը տուի չեմ գիտեր, բայց քիչ մը լռջացած՝
«Եթե պիտի չպատասխանես, ըսէ: Եթե չես ուզեր, գիտնամ ...»:

«Ո՛չ ո՛չ, պիտի պատասխանեմ, մէկ երկու օր ալ կը սպասե՞ս» ըսաւ:

«Մէկ երկու օր ալ սպասելու» պետք չկար: Արդէն խօսած ձեւէն պատասխանս առած էի ... :

Երկու օր ետք ութ էջնոց նամակ մը ստացայ: Պետք կա՞յ ըսելու որ ի՞նչ գրած էր Ալիսս:

Մեր օրերուն, Մելգոնեանի ամենայայտնի սիրահարուած զոյգերէն էինք:

Այսօր, 1964 էն ասդին, տակաւին Մելգոնեանի մէջ վառուած կրակը իր ջերմութիւնը չէ
կորսնցուցած:

Այսօր Ալիսը ինծի տուած է երկու մանչեր, որոնց միջոցաւ ալ՝ չորս թռռներ:

Անահիտ աստուածուհին իմ տոհմիս յաւերժութիւնը ապահոված էր:

Լոս Անճելըս, 2017,